ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիս, 2024 թվականի № 49-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ, 50-րդ հոդվածներով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Կանոնադրական կապիտալում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և պետության բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգի» 3-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2024 թվականի թվականի հունիսի 26-ի N 02/3-3/13694-2024 գրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի գործունեության արդյունքներով ստացվել է զուտ շահույթ 477 617 000 (չորս հարյուր յոթանասունյոթ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2023 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տարեկան շահութաբաժին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված չափով:

2. Հաստատել Ընկերության կողմից 2023 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը՝ 270 859 020 (երկու հարյուր յոթանասուն միլիոն ութ հարյուր հիսունինը հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանել Ընկերության 2023 թվականի գործունեության արդյունքներով ստացված 477 617 000 (չորս հարյուր յոթանասունյոթ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ կազմող զուտ շահույթի բաշխման հետևյալ ուղղությունները՝

   ա) 6 000 000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով Ընկերության պահուստային հիմնադրամի համալրում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան.

   բ) 270 859 020 (երկու հարյուր յոթանասուն միլիոն ութ հարյուր հիսունինը հազար քսան) Հայաստանի Հանրապետության դրամի չափով Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց տարեկան շահութաբաժնի վճարում:

4. Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինը վճարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ սահմանված ժամկետում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 հունիս, 2024 թվականի
ք. Երևան